ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ՋԵՐՄՈՒԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ, ԱՅԴ ԼՐԱՑՈՒՄՆԵՐՆ ՈՒ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. Իրավական ակտի անհրաժեշտությունը

«Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Ջերմուկի համայնքապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկի կանոնադրության մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու, այդ լրացումներն ու փոփոխությունները հաստատելու մասին» համայնքի ավագանու որոշման նախագծի ընդունման անհրաժեշտությունը պայմանավորված է «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ և 42-րդ կետերի, 30-րդ հոդվածի 2-րդ մասի, «Համայնքային կառավարչական հիմնարկների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի 3-րդ մասի դրույթների պահանջների կատարումով:

2. Ընթացիկ իրավիճակը և խնդիրները.

Ջերմուկ համայնքի ավագանու կողմից հաստատված՝ համայնքապետարանի աշխատակազմի հաստիքացուցակով մշտապես նախատեսվել է համայնքի ղեկավարի տեղակալի մեկ հաստիք՝ կանոնադրությամբ և օրենքով սահմանված գործառույթներով: Սակայն ՀՀ-ում հայտարարված ռազմական դրությամբ պայմանավորված, ՀՀ Վարչապետի հանձնարարությամբ անհրաժեշտություն է առաջացել աշխարհազորի գծով (հավաքագրում, կազմակերպում, համակարգում և այլն) համայնքի ղեկավարի տեղակալի ևս մեկ հաստիք ունենալու: «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում 2020 թվականի հոկտեմբերի 28-ին և նոյեմբերի 3-ին, համապատասխանաբար ՀՕ-468-Ն և ՀՕ-484-Ն օրենքներով կատարված փոփոխությունները ամրագրում են այդ հաստիքն ունենալու անհրաժեշտությունը, ըստ այդմ՝ Ջերմուկի համայնքապետարանի աշխատակազմի կանոնադրության մեջ պետք է համապատասխան լրացումներ կատարվեն:

Միաժամանակ, Ջերմուկ համայնքի միավորման (խոշորացման) ժամանակ, օգտվելով լիազոր մարմնի կողմից համայնքապետարանի աշխատակազմին տրամադրված մեթոդական ուղեցույցից, համայնքի կազմի մեջ մտնող բնակավայրերը ներկայացնող վարչական պաշտոնյաները կանոնադրության մեջ սահմանվել են որպես վարչական ներկայացուցիչներ, մինչդեռ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքը նրանց սահմանել է որպես «վարչական ղեկավարներ»: Կանոնադրության մեջ անհրաժեշտ է կատարել համապատասխան փոփոխություններ:

3. Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը.

«Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Ջերմուկի համայնքապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկի կանոնադրության մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու, այդ լրացումներն ու փոփոխությունները հաստատելու մասին» համայնքի ավագանու որոշման նախագիծը ընդունելու արդյունքում ակնկալվում է ունենալ համայնքի ղեկավարի տեղակալի 2-րդ հաստիքը, որի արդյունքում համայնքում հնարավոր կլինի իրականացնել աշխարհազորի գծով (հավաքագրում, կազմակերպում, համակարգում և այլն) բոլոր անհրաժեշտ աշխատանքները:

4. Իրավական ակտի նորմատիվ բնույթի հիմնավորվածությունը

Քանի որ կանոնադրությունը նորմատիվ հավաքական ակտ է, որը որոշում է համայնքապետարանի աշխատակազմի կառուցվածքը, խնդիրներն ու իրավասությունները, պաշտոնատար անձանց և այլ աշխատակիցների գործողությունների կարգը՝ որոշակի դեպքերում, կարգավորում է կոնկրետ հարցերով կազմակերպական, գույքային, աշխատանքային հարաբերությունների ամբողջությունը, հետևաբար կանոնադրության մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ավագանու որոշման նախագիծը կրում է նորմատիվ բնույթ՝ պարունակելով վերը թվարակված իրավահարաբերությունները:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**